


ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրին ԱՐՇԱՒԱՅՍ յարգի ԳԱՅԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԵՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասեր	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան »	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆ ԿԱՆԽԻԿ Եւ թղթատարի ծախքը հոնքագրութեան վրայ է :

հոնքագրութեան ուղղուած գրութիւնք էս չ'են տրուիր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ Կանխիկ վճարելի են

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHAËLOUICE
LE CAIRE (EGYPTE)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժանողներէն ջերմապէս կը խնդրուի որ բաւականապէս նախորդ տարիէն մնացեալ պարտաց կցելով որկել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ Ծառերը յանձնելու թաժանորդագիրը, եւ հարկ չը քողոյ մասնաւոր դիմումներու, որոնք նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱՒԱՅՍԻ արդէն բազմազարդ Տնօրինութեան :

Ն Ա Մ Ա Կ Կ Ր Ե Տ Է Է Ն

Գաճախ 1)14 Նոյեմ. 1900

Պատուարժան Խմբագրութիւն ԱՐՇԱՒԱՅՍ Ազգագուտ Լրագրի Ի Գահիրէ

Ինչպէս յայտնի է, Կղզույ՝ վերջին ստակալի բայց արդիւնքը միութեան ղեկավարութեան մասնակ, չարագործ, վարձագ խուժանը տեղույս Ազգ. Ս. Եկեղեցին կիսովին կործանած էր, անոր Ս. անօթներն ու սպանները կողոպտել է վերջ :

Եւրոպական Տէրութեանց գրաւումով՝ երբ Կղզույս կացութիւնն ապահովեցաւ՝ Ս. Կարապետ Եկեղեցույս նորընտիր Պատուարժան Խմբագրութեան ջանքերով ու բարեսէր ազգայիններու օժանդակութեամբ Եկեղեցույս վերանորոգութեանն ու բարեզարգութեանը ձեռնարկուեցաւ. սակայն վերջը շատ մեծ ըլլալով՝ ցարդ պակասներ կը մնան, զորս անշուշտ առատաձեռն, ազգասէր ազգայիններու նուէրներով պիտի ամբողջացնենք :

Վերջին երեք ամիսներս մեզի շատ ուրախութիւն եղան, որովհետեւ այդ ժամանակաւ միջոցին օգտւորութեան համար քաղաքս եկան ու գացին Արաբկերցի Գահիրէի մասնակ Տէր Լու Տիկին Առաքել Մ. Պէրպէրեան, որ Եկեղեցի գալով՝ երբ տեսաւ թէ՛ դուռն առանց վանդակապատի էր եւ ժողովրդեան համար չը կար նստարաններ, փափաքեցաւ իւր վաղամեծիկ զաւակաց յիշատակին՝ թէ՛ վանդակապատն եւ թէ՛ ժողովուրդին համար վեց մեծ նստարաններ շինել տալ. որոնցմով լրացաւ երկու անհրաժեշտ պակասներ :

Նոյն ամիսն եւ նոյնպէս Արաբկերցի Գահիրէի մասնակ Պարոնայք Վահան, Միսաք, Լեւոն Եագուպեան եւ Նշան Գ. Եկեղեցին շինել տուին Սեղաններու Խաչկալները :

Պարտք համարեցի ինձ, յիշուալ բարեսէր Ազգայնոց Բարեգործութիւնները Պատուարժան Խմբագրութեանց հարգելով խնդրել, որպէսզի Ձեր Պատուական թերթին միջոցաւ հրատարակել բարեհաճիք, այլոց բարի նախանձը շարժելու համար :

Մնամ Ձերոք սրտագին աղօթարար՝ ՄԱՆՈՒԷԼ ՔԷՆՅԵ. ՏէՐ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ Հոգեւոր Հովիւ Հայոց Կրտսէր

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ.

Լաւ է ինաստու թշնամի քան անմիտ քարեկաւ .
Ժողովրդական առած

Ամեն անոնք որոնք ազնուութիւնն ունեցած են հետեւիլ իմ գրութիւններուս, անշուշտ դիտած են որ իմ միակ աշխատութիւնս եղած է հանրութեամբ զբաղիլ : Եւ եթէ գրչի տակ հանգիւած են երբեմն այնպիսի գէպքեր, որոնք անհատի վերաբերելու երեւոյթ մ'ունենին, և որոցմով ստիպուած էի՝ սակայն՝ զբաղելու, այդ դժուարին և ապերախ գործը ջանացած եմ կատարել չըջահայեցութեամբ, փափկանկատութեամբ, և՛ ինչ որ լաւագոյն է, անկողմնակալութեամբ :

Ամեն յաւակնութեան հետի գտնուելով և իմ անկարողութիւնս քանիցս խոստովանելով հանդերձ, միշտ խորհած եմ որ հրապարակագրի մը առաջին պարտականութիւնն է ըստ կարելոյն գործածել այնպէս լեզու մը, բռնել այնպիսի ընթացք մը, որոնք եթէ գնահատելի հանգամանքներ չ'ունենան, գէթ գայթակղութեան ալ առիթ չ'տան : Հրապարակագիր մը անշուշտ չի յուսար որ իր գաղափարները առանց վերսպահութեան ընդունուին հանրութեան կողմէն, բայց նա ինքզինքը լիօրէն վարձատրուած կը համարի եթէ իր գրաւոր խօսակցութեանց մի բառը, մի պարբերութիւնը ընթերցողաց ուշագրութեան արժանանայ, և զանոնք գրգէ ընելու ինչ որ արժան կը դատուի : Այդպիսի վարձատրութեան մը յուսով է որ կ'ըբաղիմ « Նոր Օր » ի առաջնորդող — Խմբագրականի մը հարեանցի ուսումնասիրութիւնով :

Խմբագրականը թերթի մը հոգին է . գրութեանց այդ մասն է որ աւելի պիտի շեշտէ թերթին ուղղութիւնը, հոն պիտի յայտնուի առաջնորդողին առաջնորդելու յարմարութիւնը, ատակութիւնը : Եւ երբ հոն, այն կտորին մէջ, փոխանակ լրջութեան թեթեամտութիւն գտնենք, փոխանակ ուղղախոհութեան՝ անիմաստութեան հանդիպինք, փոխանակ յստակութեան հակասութեանց մէջ տապալուինք, փոխանակ բան մը չհանելու՝ ունեցածնիս ալ վրայ տանք խաբուելով յոգուածին խոստովանի վերնագրէն, գժուարագարման կ'ըլլայ մեր

բարոյական և մտաւորական կորուստը : Մանաւանդ եգիպտոսի պէս Մամուլը ճոխ և ազատ երկրի մը մէջ մեր ժողովուրդը չէ՛ թէ քաղաքական լուրեր, այլ ազգասիրական և եղբայրսիրական առողջ և հզօր գաղափարներ միայն կ'ուզասէ Հայկական մամուլը ներկայացնող Լիլիթիութեան երկու թերթերէն . . . : Այս և համանման մի քանի նկատումներով, և դարձեալ ազգասիրական պարտականութիւն մը կատարելու փափաքով պիտի շարունակեմ այն գիտողութիւններս, որոնց առաջին մասը հրատարակուեցաւ « Արշալոյս » ի անցեալ թուով : Ձեմ կարծեր որ այս քննադատութիւնը վնասառիթ ըլլայ քննադատուած խմբագրին, և կամ ընթերցասէր հանրութեան : Անհրաժեշտ է որ մին գիտնայ թէ ինչ կը գրէ, և միւսը՝ թէ ինչ կը կարգայ :

« Դալով եգիպտոսի, կ'ըսէ իմ գրագէտս, հրապարակը առջի օրէն գրեթէ կարգ մը ինքնակոչ հրապարակագիրներու և նորընծայ գրողներու ձեռքը մնացած է որոնք մինչև իսկ տիրապետել կ'երպան Հայ Մամուլին : » (Կ'երկի որ կիսադրոսիսն ալ անանկացած է :)

Այս հաստուածը, որուն մէջ իմ գրագէտս իր բոլոր կարողութիւնը ի գործ դրած կը թուի՝ անով վերջնականապէս ջախջախելու և անհետացնելու համար այդ խիզախ ինքնակոչները, կրնար թերեւս բան մը ընել, եթէ Ա. Իմ գրագէտս հաճէր իբր ո՛չ ինքնակոչ հրապարակագիր իրեն ուղղուած հրաւիրագիրը ցոյց տալ : Բ. Եթէ գրեթէ բառը մեզի ըսէր թէ ինչ գործ ունի հոն : Գ. Եթէ կ'երազներ յորանջելու չ'արամադրեր ընթերցողը : Դ. Եթէ ամբողջ կտորը սոսկալի կերպով չ'հակասէր վերէն ի վար կարգացուածին : Հարկ է հոս յիշել որ իմ գրագէտս՝ նոր Երեմիա կ'ողբար դրական հրապարակին ամալութեանը վրայ . վասնզի գրագէտներուն մին ծերացած է, երկրորդ մը հիւանդ է, երրորդի մը աշուրները կուրցած է և մնացեալներն ալ « սողին անդին » ցրուած են : Եւ ահա՛ յանկարծ մամուլ մը կը գտնէ Եգիպտոսի մէջ . բնականաբար Շոր—Օրը : Արդ ներքի է ենթագրել — թերեւս այս մասին համամիտ կը գտնուիմ իմ գրագէտին — թէ՛ նոր Օրը՝ որուն մէջ կը փայլի ինք իր լուրջ, խոհուն, իմաստալից, հրահանգիչ առաջնորդականներով կը ներկայացնէ արտասահմանի Հայ մամուլը, ինչպէս « Բիւզանդիոն » թերթահայ մամուլը : Ուստի շարունակենք .

«Այս կարգի իմաստակներ (°) կը փառաբանուին (այս բառը յատարար նշան մ'է որ իմ գրագէտս ֆրանսերէնի ալ տեղեակ է . փառաբանողի ֆրանսերէնը սր կոտորակի բառին ծաղկոցեան թարգմանութիւնն է . հայերէնը ըլլալու համար պէտք է ըսել պարծենալ) երբ Յովսէփ եպիսկոպոս Այվազեանի դէմ բան մը գրած ըլլան (ուրիշ դէմ գրած ըլլային նէ , իրաւունք պիտի ունենային փառաբանելու . աւելին ըսել գրողին կը ձգեմ .) երբ Պ . Փասուլեանի նման գերասանի մը արարքը մասնանի ընեն (այս յանցանքը ես գործեցի և պիտի պատճառաբանեմ քիչ ետքը .) երբ «Սփինք» ի կերպարանքը առնելով (օ՛հ) . . հեղինակութիւն մը կը զրպարտեն (զրպարտութիւն ըլլալը փաստերով ցուցնելու է , բայց այս ինքզինն ալ Սփինքին կը վերաբերի .) երբ որ համարձակին (°) Սամուէլեանի նման Ռուսահայ համալսարանական քահանայի մը քարոզը ձգելու : (ինչու չէ , եթէ ձաղկուելու քարոզ էր . բայց ասոր ալ պատասխանը կը թողում Աղէքսանդրիարեանի Յարգելի յօդուածագրին : Միայն կուզէի գիտնալ որ եթէ յիշեալ քահանայն թրքահայ և ոչ-համալսարանական ըլլար անհատ մը պիտի կրնար անոր քարոզը ձաղկել : Իմ գրագէտս աւելի պատշաճ լեզու մը գործածած չէ՞ր ըլլար եթէ եպիսկոպոսին և քահանային տար այն տիպոսները , որոնց իրաւունք ունին իբրև եկեղեցական պաշտօնեայ :)

(Շարունակելի)

ԳՐԱԿԱՆ ՍՆԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Նոր Օրի Պատ . խմբագիրը իւր թերթին մէջ բառերու և իմաստից մէկ մէկու հետ ըրած պատերազմը առանց նկատողութեան առնելու , այս անգամ իւր 48 թիւին մէջ «Գրական Սնանկութիւն» վերնագրով յօդուած մը հրատարակել է , որուն մէջ ինքզինքը լուսացարար մը կարծելով՝ ամեն հրատարակչի որ հազար անգամ աւելի կ'արժէ մեզ անմիջական վտանգներուն մէջէն առաջնորդելու քան թէ որոշ խելքը և երկու շարժուածքով աւանանք արագութիւնը ստացայ եւ գազանին առջին և երկրորդ ոտտուներն միջև սահած փոքրիկ միջոցին մէջ ալ համարձակ էի կռուի մասին :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՄՐՅՈՒՄ ՄԸ (ԻՐԱՎԷՊ)

(Շարն . նախորդ թիւէն և վերջ)

Վերջապէս գազանը իր որոշումը տուաւ , կրկին գէպի լիճ գարձաւ և քայլ մը առաւ և զերբին կողմը , այս քայլը զիս իրեն չ'էր մօտեցնէր և կրնար ըլլալ որ իր ընտրած ճամբան ինծի նպատակները ըլլար , բայց երկրորդ քայլին սարսափս ինծի որոշել տուաւ . ոտտում մը ըրի ապա երկրորդ մը և հեծելանիւս վրայ նստայ :

Այնպիսի խելագոտոյտ մը էութիւնս կը ընէր որ առաջ չ'հասկցայ թէ վազը շարժեցա՞ւ թէ չ'է , բայց ակնթարթի մը մէջ մինչդեռ փոքրիկ համէտին վրայ կը նետուէի՝ տեսայ որ խոշոր մարմինը ամփոփուեցաւ , ոտտումը լըսեցի :

Միևնոյն րոպէին պատուանդանիս առաջին հարուածը կուտայի :

Հակառակ ծայր աստիճան յուզմունքիս , շարժումներս վստահ , որոշ և թեթեւ էին , կարծես թէ ամբողջ բնագրում եղած ըլլայի և նեարդերէս իւրաքանչիւրը հնազանդէր այն մութ

պարագրերը մէկ շուրջ լուսու շանք չ'է իննայի :

Ինքնահաւան անձի հետ խօսելու թեթեւամիտ տղու հետ խօսելու կը նմանի . տղայ է , ըսածը չգիտեր , սխալ է կրես , մտիկ չընէր . խօսքերդ իրենց մէջ կապ չունին , և քու մասնանի ընելու ուզած իմաստակներուդ խուճիկը կը վստան մէջը , խօսքը ակնալը չմտնար . ալ կը պարտաւորիս ըսել թէ , գրածներուդ մարդ չհաւնիր . «Ես հաւնելէս ետև կուզեն հաւնին , կուզեն չի հաւնին» կըսէ . ինչ որ չես ըսեր , « ըսիր » կըսէ , և ինչ որ ապացուցութեամբ կը խօսիս , չհասկնալու կը բերէ . և տաճկական առածին պէս օտմնում ըսելէ անդին չ'անցնիր :

Ինչո՞ք մոռցած է թէ , իր գրուածոց դատաւորը լրջամիտ ընթերցողն է , որոց մէջ իրեն հաւասար , և իրմէ շատ վեր անձինք կան մտաւորապէս զարգացած :

— Ինչո՞ք երբ կը քալեն , կը կարծեն թէ ուղիղ կը քալեն , — որչափ դժուար է այս կարծեաց մէջ մտնալ , և ուղղելն :

Պատ . Խմբագիրը չ'ուզելով յիշել նշանաւոր գրչի տէր քաջածանօթ անձինքը , սրբ իրենց գրագիտական բարձր հանճարովը այսօր կը փախին հայոց ազգին մէջ , գերական հրապարակը իւր աչքին ամալի անպատի մը պէս կ'երևի , և մարդ չ'է մնացեր , ամենքն ալ իմաստակ են ըսելով գերական անանկութիւն կը յայտարարէ , և իբրև ճշմարտութիւնը խօստովանող անձ , քանի մը բազմախառ և արդիւնաշատ գրագէտներ յառաջ կը բերէ իբրև անկենդան գիտնիկ , միոյն ծեր է կ'ըսէ , միոյն խենդ , և միւսին կոյր , ասկէ անդին մնացածները իմաստակ կ'անուանէ , և այս հաշուով ինքը միայն կը մնայ հրակարակի վրայ , բայց իմաստուն թէ իմաստակ , այս մասին մոռցեր է տեղեկութիւն մը հաղորդել ի միամտութիւն ընթերցողաց :

Ենթագրենք որ այնպէս ըլլայ , իրեն պէս իմաստուն , ճարտարախօս , ժողովուրդը կ'ըթեւու , և ուղիղ բանավարութեան ասպարէզը առաջնորդելու հանգերձեալ խմբագրի մը կը վայելէ՞ խենդ , կոյր ևն .

Կամքին որ հազար անգամ աւելի կ'արժէ մեզ անմիջական վտանգներուն մէջէն առաջնորդելու քան թէ որոշ խելքը և երկու շարժուածքով աւանանք արագութիւնը ստացայ եւ գազանին առջին և երկրորդ ոտտուներն միջև սահած փոքրիկ միջոցին մէջ ալ համարձակ էի կռուի մասին :

Ամենակարեւորը իմ և գազանին մէջտեղը հեռաւորութիւն մը պահելն էր , հոգ չ'է թէ ամենաթեթեւ ըլլար , դոնէ յիտուն մէջը ի մը փամանակ , որովհետեւ ասկէ ետքը հաւանականաբար վազը արագութիւնը նուազ սարսափելի պիտի ըլլար թէպէտեւ միշտ պիտի կորսնցնէր :

Հեծելանիւր շարժեցի մոլորիս ետևը մը , բայց չորրորդ ոտտումին հեռաւորութիւնը քանի մը քալի իջած էր , հինգերորդին միայն թաթը երկնցնել կը մնար , եթեմբորդին օդուրից քառուչուին դպաւ : Ինքզինքս կորուսած կարծեցի , այն պահուն ըրած ճիգս ալ պարագ կարծեցի , բայց ճիւղանը նպատակակէտն սահեցաւ , հազիւ թէ գայն շօշափեց , մեքենան իր ճամբան շարունակեց : Փազանը ութերորդ ոտտումին նուազ արագ գտնուեցաւ ճիշտ նպատակակէտն վերպած ըլլալուն համար :

Այս խելացնոր երկվայրկեաններուն մէջ ներշնչումը ունեցայ գէպի կուսեակներն մը շեղելու որ ճամբուն եղերքը կը գտնուէր և այս անգամ ալ պրծայ , հալածողը մէկէնիմէկ վա-

րսելով այնպիսի պատուական անձինքը նախատել . եթէ բան մ'ալ չ'ունէր , գոնէ մանանեխի չափ քաղաքավարութիւն ալ չ'ունէր պատշաճապէս վարուելու :

Ինչպէս իր գրուածքներէն կ'երևի՝ Նոր Օրը , այնպէս մը կը գովէ որ ընթերցողը կարծէ թէ , եթէ մէկը սրտի ցաւ , կամ փորի խօստուկ , կամ որ և է վերով վայրով ցաւ մը ունենայ , և Նոր-Օր մը խաչէ և քամէ ու ջրոյ մէկ մասը խմէ , և միւստի լուսցուի , անմիջապէս կը բժշկուի :

Արդ , որովհետև ինքը փաստաբան է , և ասոր համար ալ իւր գրուածոց մէջ փաստաբանի խօսքեր ալ շատ կ'ընէ , կը հարցընենք իրեն թէ՞ մարդ մը իր ըսածն ու լսածը պարտի փաստերով հաստատել թէ ո՞չ : Խօսողը կ'ուզէ իմաստակ ըլլալ կ'ուզէ իմաստուն , ենթագրենք որ խօսողը իր հաւանած իմաստուններէն մէկն ըլլայ , և ըսէ՛ չորս չորս ալ տասը կ'ընէ , պիտի ընդունէ՞ր , կամ իր կարծեցեալ իմաստակներէն մէկն ըլլայ , և երկու անգամ երկու չորս կ'ընէ ըսէր , այս ճշմարտութիւնը պիտի խեղճէ՞ր , ըսել է փոխանակ գրողին իմաստուն կամ իմաստակ ըլլալը նայելու , խօսքն սո՞ւտ թէ իրաւ ըլլալը նայելու է :

Այս կարգէն է Այվազեան Յովսէփ եպիսկոպոսի համար «Արշալոյս» ի 91 թիւոյն մէջ գրուածին տուած պատասխանը :

Եթէ «Արշալոյս» կ'մէջ գրուածները սուտ էին , թող զաննք ցուցնէր , և կը բաւէր , կարգացողն ալ կը հասկնար , թեբև ինքն ալ կը համոզուէր , իսկ եթէ Յովսէփ եպիսկոպոսին պատպան կենալու դիւցալութեան միտեցաւ , գէշ ըրաւ մարդը նորէն հրապարակ բեւեղով :

Ուրեմն Պատ . Նոր Օր , ինչ որ կ'ուզես խօսէ՛ , բայց առանց փաստի ո՛չ , առանց փաստի խօսիլը կոյր կուսակցութիւն մը , իմաստակ բառախաղացութիւն մը , և զրպարտութիւն մի է , սր ուղղամիտ մարդուն ո՛չ սիրտը կը ներէ , և ո՛չ պատիւը :

ՄԵՆՔ ԱՂ

Կը շնորհաւորենք «Նոր-Օր» ի ինքնակոչ

րանեցաւ , կուսեակներն իր ամբողջ ոտտումը կ'արդիւնէր և զինքը կ'ստիպէր դառնալու :

Թէպէտեւ իմ արագութիւնս ալ իր գազաթնակէտին հասած էր , բայց դեռ ուր է յոյս չ'ունէի : Լաւ կ'զգայի որ հակառակորդիս մէկ կամ երկու ոտտումը ալ վերջնականապէս այս կոխը անդառնալի կերպով պիտի գոցէր : Յաջորդ ոտտումին մազ մնաց որ նորէն օձիքս ձեռք պիտի առայի , բայց միևնոյն ատեն անխնայ խելացնոր արագութեամբ կը գտնային գազանին ճիրաններուն առջեւէն , փայլակ մը անցաւ աչքերէս , հեռուն բաւական երկար և շատ նեղ կամրջակ մը տեսայ , որուն վրայէն պիտի անցնէի , այս կամրջակը տեսակ մը փոքրիկ ոտոգման ջրանցքի մը վրայ ձգուած էր , անոր տեսքը որտեղ մէջը յոյսի նշոյնները արծարծեց և ինծի աներեւակայելի քաջութիւն մը տուաւ : Շատ որոշ տպաւորութիւնը ունեցայ որ վազը կարճ վարանում մը պիտի ունենար և կարելի էր որ կամրջակէն անցած պահուն գնացքը դանդաղեցնել ստիպուելով քանի մը մէթը կորսնցընէր : Իրապէս այդպէս ալ եղաւ , երբ ջրանցքին միւս կողմն էի տասնեակ մը քայլ վատկած էի արդէն առելի կատուին վրայ : Կարծեմ թէ այս առաւելութեան գիտովութեանը մէջ գնացքս աւելի արագացուցի :

Յաջորդող րոպէներուն մէջ վազը կամայ կամայ իր յապաղումը վատկեցաւ . բայց լաւ

խմբագրի հոնորարներն կախած մէկ գիւտը . անանկ բառ մը ոչը ստեղծել ու տեղին գործածելու համար Պ . Ֆասուլեան չը խորհելուն ինք իբր Մօլիեր՝ առաջ անցած եւ առանց ներդրեալ իսկոյն իր կողմէն համարձակած է Մրնարան-Բն-րեղցատուն անունով մկրտել (Նոր-Օր թ. 48) անանկ հասարակութիւն մը, որը իր գոյութեան իրաւունքը միշտ փնտռած է հայ ժողովուրդի մտաւոր բարոյական զարգացմանը մէջ :

—Թո՛ղ Պր . Ս . Փափագեան նախ իբր մտրդ եւ ապա խմբագիր (°) հաճի հրատարակու ըսել մեզ թէ՛ Ա . Ի՛նչ իրաւունքով Պ . Ֆասուլեան ձեռնի յօդուածին այդ « Լսարան » բառը առանց յօդուածագրի հաւանութեանը « սրճարանի » փոխած է (1) :

Բ . Պազար-Մուրուրի Լսարան-Ընթերցատան մէջ ի՛նչ տուած է որ : այդ կերպով վարկաբեկ ընելու (եթէ կրնայ) ճիգ մը ունի հանրագուտ յարկ մը :

Մենք լաւ գիտենք որ զգուշի չարութիւն մը եւս անցած է « Մեծ Ոճրագործը » գովաբանողի մտքէն, եւ պարզ է որ հակառակ մեր բարձրանաց եթէ մի օր այս խիստ համեստ շէնքի դռները բաց չ'մնան, Պ . Փափագեան կը կարծէ տարած ըլլալ յաղթանակը . . . լոյսին դէմ . . . Ո՛վ Օրագրութեան անկում . . . Դո՛նէ՛ ամաչել գիտնար . . .

Պազար-Մուրուրի Լսարան-Ընթերցատան Խումբ մը Ընթերցողներ Գահիրէ 25 նոյմ . 1900

ՆԱՆՕԹ . (1) Կարելի է Ֆասուլեան իր ստորագրութիւնը անո՛ր ծախած է, նորաձև աւետարտով մը :

« ՆՈՐ ՕՐԻ » « ՍՆԱՆԿՈՒԹԵԱՆ » ՅՕԴՈՒԱԾԻՆ ԱՌԹԻԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԱԼ ՄԵՐ ԿՈՂՄԱՆԷ

« Նոր Օր » ի խմբագրութիւնը՝ որ անցեալ օր վաճառականական անանկութեանց վրայ կը գրէր, այս անգամ ալ ինք գաղափարի սնանկութեան մատուցելով՝ երբ հայ գրականութեան հրատարակիչ վրայ արեւոյտի կարծիքներ կը յայտնէ : Աւելի լաւ կ'ընէր Նոր-Օրի « բարձրագուտ » խմբագիրը եթէ փաթեթէսին սպառման կամ բամբակին ու ֆոլիան բիացային վրայ գրէր :

Հրատարակիչ վրայ ո՛րքան շնորհքով գրողներ կան՝ ամենքն ալ սնանկացեր են եղեր, եւ « թուուցեր են հրատարակը կարգ մը անխոնձ գրողներուն . . . » Գրական հրատարակչի նշմարեցի որ առաջուան նման գիւտութեամբ չ'էր : Յոյսի արշալոյս մը ինձի հոգի տուաւ եւ յետով հեռաւորութիւննիս անփոփոխ մնաց :

Չ'եմ կայող ըսել թէ ճիգերս կրկնապատկեցի որովհետեւ ալ սրբազնութեան զարգացման կէտը հասած էի . բայց մտքիս եւ գնդերներուս իրողը կողով պահեցի : Գրանի մը հարիւր մէթըրէ յետոյ հեղափոխութեան հեղափոխութեան հաստատելու թէ ո՛չ միայն առաւելութիւնս կը պահէի այ՛լ եւ անաւոր կատուագրի երկու մէթըր կորսնցուցած էր . փոքրիկ զառիվայրի մը մօտ հեծել միւլուս ուղմի մը պէս ձգեցի եւ այսպէս կտոր մը հեռաւորութիւնս եւս շահեցայ :

Արդէն յաղթանակը տանելու գաղափարը կուրծքս կ'ուռեցնէր ուրախութեան բաբախումով մը ինքզինքս ալ ազատած կը կարծէի, պատուանդանը զուարթ մոլեգնութեամբ մը հըրեցի, բայց յանկարծ պարագայ մը մագրոս սնկի ստացաւ : Աղամաթուզի դաշտի մը մուտքին քով տերեւալից ճիւղ մը կար որ հողագործին մէկը նետած ըլլալու էր, ճամբաս գոցուած էր : Ժամանակ չ'ուռեցայ զգուշանալու եւ անգրիէն շեղելու . հարկաւ այսպէս պարագայի մը մէջ ո՛չ կրնայի ծռել եւ ոչ ալ հեծելանիւէն իջնալ, վարկնաբար որոշումս տուի եւ արգելքը անցայ :

Դժբաղդաբար շարժումս քիչ մը կաշկանդուեցաւ եւ հաւասարակշռութիւնս չկորսնցնելու

կին վրայ ուրեմն գրողներ միայն Պէրպէրեան, Գուրգէն, Գարագաշեան եւ Տէմիրճիպաշեան էին մեր մէջ, եւ Արփիար . Չօպանեան . Եաննազար . Բաշալեան . Օտեան . Զօհրապ . Աղէքսանդր Փանոսեան եւ ուրիշ շատ մը կարող նոր հրատարակագիրներ միթէ անշնորհք գրողներ են :

Մեր գրական ո՛ր շրջանին մէջ երեւցած է երբէք « Անահիտ » ի նման ճոխ պարունակութեամբ գրական հանդէս մը, « Նոր-Կեանք » ի պէս շահեկան յօդուածներով լի պարբերական թերթ մը, « Համալսարան » ի եւ « Բանասէր » ի պէս գիտական ամսաթերթ մը, եւ դեռ ուրիշ քանիներ :

Թէ որ հրատարակ ըսելով Պ . խմբագիրը Պօլիսը կամ Եգիպտոսը կ'ուզէ հասկնալ . է՛. շիտակ ըսելիք չ'կայ իւր հասկացողութեան : Աղբի մը գրականութիւնը սահմանափակել մէկ երկու քաղաքի մէջ՝ գործ է սահմանափակ մտքի մը : Ընթերցողներու թիւը հիմա բաղադրարար խիստ շատցած է, ինչպէս « Բիւզանդիոն » ի բազմամուտ խմբագիրը անցեալները կը յայտարարէր խմբագրականի մը մէջ, անձնական փորձով համոզուած : Ուրեմն սնանկութիւն չը տիրեր լրագրական հրատարակի վրայ, ընդհակառակն թիւսն շատ է : Եւ ասոր մէկ ապացոյցն ալ սա է թէ՛ իրեն պէս անհմուտ ապիկարը չ'կրնալով յաջողիլ իրեն ընտրած ասպարէզին մէջ, կը փորձէ խակ գրչով մը յաջողութիւն գտնել լրագրական հրատարակի վրայ :

Իսկ եթէ « Նոր-Օր » ի նման թերթ մը իւր օտարազգի ի ցափուտութեամբ չ'կրնար յաջողութիւն գտնել . այդ շատ բնական է, վասնզի ընթերցող հասարակութիւնը հակառակ Պ . խմբագրին յայտարարութեանը շատ լաւ գիտէ զանազանեւ « գեղեցիկը սգեղէն » եւ օգտակարը անպէտէն :

Ըստ մեզ՝ եթէ իրօք կայ սնանկութիւն մը այն ալ ո՛չ թէ գրողներու մէջ տեղի ունեցած է, այլ Նոր-Օր ի խմբագրին խելագատակին մէջ, որ ուզած է ձախաւեր միջոցաւ մը ձրի նախատինքներ ուղղել այս ու այն անձին հասցէին : Սակայն այդ նորընծայ խմբագիրն ո՛րքան ծիծաղելի կ'ըլլայ երբ ուրիշ գրողներ խակ ու նորընծայ կոչելով՝ յորդորներ կը կարգէր անոնց, մինչդեռ իւր թարգմանութիւններով, խմբագրականներով . եւ լեզուի անհեթեթ սըխալներովը ցոյց կուտայ թէ՛ ինք ո՛րչափ կը կարօտի վարպետ գրողի մը :

Եթէ վարպետ փաստաբանի քով երեք տարի աշխատելով միայն կարելի է դատաւարութեան մտնել, ինչպէս կ'ըսէ փաստաբան-խմբագիրը, ուրեմն դատելով իր գրածներէն, կըսենք թէ՛ ինքը գո՛նէ տասը տարիներ պէտք է

համար ստիպուեցայ քանի մը դարձուածքին գրնացքս դանդաղեցնել : Մտակերը նշմարեց զայս, յուսահատ ճիգ մը ըրաւ եւ տեսայ այն ստակալի վայրկեանը որ անուրի գաղանիս ճիւղին տակ պիտի իյնայի, վրաս մարեւիք եկաւ ստակալի լքման մը պտոյտքը մարմնէս անցաւ, եւ տարօրինակ համակերպութեամբ մը մեծուս սպասեցի : Ասիկա փայլակի մը տեւողութեան չափ էր :

Երկվայրկեանէ մը կտրու սկսայ դարձեալ ալ վերջին գերագոյն ճիգը եղաւ, վազըր թէեւ տակաւին լաւ որսական ձիու մը պէս արագ էր բայց վերջնականապէս յաղթուած էր հեծելանիւէն, շուտով հետապնդումը ձգեց մաս մը վըհատութիւնէն եւ մաս մ'ալ հարկաւ գիւղին մօտակայութիւնէն, ուրկէց ստակալ սորոտած էր :

Բայց սակայն ես արագութիւնս չ'նուազեցուցի, մինչեւ տանտիրոջս բնակութեան առջեւ քեցի մեքենաս եւ հոն միայն պայթեցաւ սրտիս մէջ ազատած վտանգիս անհուն զարմացումը, ապրելու ուրախութիւնը եւ արագութեան մասին կուտելու հպարտութիւնս, աշխարհիս ամենէն թեթեւաշարժ եւ ամենէն անուրի գաղանիս մէկուն հետ :

Ժ . Հ . ՌՕՆԻ .

Թարգմ . ԼԵՒՈՆ

աշխատի լաւ գրողի մը քով՝ որպէսզի պարագայ տեղը էջեր չի մրտտէ եւ հասարակութեան գըլուխը չ'ուռեցնէ զբարանութիւններով :

Լրագրական հրատարակիչ վրայ կանգնած այդ Նոր Արշակաւանին մէջէն ահա այս անգամ ալ Պ . խմբագիրը ինձ Պարթեւական նետեր կուզէ կ'արձակել : Հա՛րկ է ըսել որ իր հարուածները անզօր եւ ապարդիւն են :

Ես իրողութեան վրայ խօսած եմ . իւր սպասարարական անձնախորհրդան պերճախօս ու կենդանի վկան մէջ տեղ է : Անշուշտ ընթերցողը հակացան թէ խմբագիր-փաստաբան Փափագեանի սակէ առաջ հրատարակած « Թուրքիա 1876 էն ի վեր » տետրակն ակնարկել կուզեմ, որոյ մասին գրածներս կը նկատէ « զրպարտութիւն » մը . բառ մը որոյ իմաստը, ցաւալի է ըսել որ չէ կրցած ըմբռնել փաստաբան-խմբագիրը : Մենք մեր քննադատութեան մէջ՝ իր հեղինակութիւնէն մէջ թերած պարբերութիւնները, էջերովը եւ հատուածներովը ցոյց տուած էինք . իրեն կը մնար ցուցնել թէ՛ ո՛ր էջերը կամ ո՛ր հատուածները սխալ ներկայացուած են : Նոր-Օրի խմբագիրը հոս պարզապէս ցոյց կուտայ թէ՛ ինք սակաւին անկարող է իրերը իրենց բնական գոյններով տեսնելու եւ անընդունակ ճշմարտութիւնն իրենց բնական ընթացքով ըմբռնելու : Սակայն մենք այս մասին չենք զարմանար . այլ կը զարմանանք անոր՝ որ Պ . Փափագեան չէ՛ ուրացած երկին գոյութիւնը . երկ մը՝ որ իբրեւ դատակնիք խաբան մ'է իւր ճակատին եւ սանձ մը իւր բերնին :

Ար՛դ ի մէջ այնոց կը հարցնեմ թէ ինչո՞ւ այդ նշանաւոր գործը հրատարակ հանել չ'է ուզած՝ այլ ընդհակառակն զայն պահած է ծակէ ծակ, քանի որ մենք եւ մեզի պէս շատեր « չ'են հասկցած այդ հեղինակութեան ինչ ըլլալը » . մեր վերջին բառը արտասանելէ առաջ կ'սպասենք Պ . հեղինակին տալիք բացատրութեան :

Պ . խմբագիրը յօտորտանօք կը պարծի թէ « նոյն հեղինակութեան տողերը շարադրող գրիչը՝ այսօր Նոր-Օր ի էջերուն կը նուիրէ զինք անձնուիրաբար » : Լաւ . վայրկեան մը ընդունինք թէ այդպէս է, սակայն ի՛նչպէս վրասաւ ըլլանք թէ « Թուրքիա 1876 էն ի վեր » ի հեղինակը ելնէ գեղեցիկ օր մ'ալ հաճոյակատարութեամբ մը, Նոր-Օրը իւր սիրեցեալ եւ պաշտեցեալ վեհապետին տրամադրութեան տակ չը դնէ . . . : Ուրեմն ցտեսութիւն :

ՍՓԻՆԻՍ

Տիար Ա . Պէզճեան Այնթապի կեդրոնական Գօլէճի բազմախառ Ռոֆէսէօրը Եւրոպայէն դարձին Դահիրէ այցելած ըլլալով վաղը 2 դեկ . առաւօտեան ժամը 10 Ը . Ե . պիտի քարոզէ Ամերիկեան վարժարանին մեծ սրահին մէջ Էօզպէրլիյէ :

Ռոֆ . Պէզճեան իր երկարատեւ աշխատութեամբը եւ գիտական երկերովը արդէն հուշակաւոր եղած է կիլիկիոյ ազգայիննորուն մէջ եւ լիայոյս ենք թէ Գահիրէեան ազգայինք եւ նոյն պատեհութեանէն օգուտ քաղելով պիտի փութան ներկայ գտնուել ալեկարդ Ռոֆէսէօրին բանախօսութեան : Յօգուտ տաճկախօս ազգայիններուն Ռոֆ . Պէզճեան տաճկերէն լեզուաւ պիտի խօսի :

Table with 6 columns: 7804, 5653, 2363, 393, 5114, 9831; 8410, 2061, 2846, 5946, 9606, 9622; 2310, 6727, 8383, 4602, 415, 8969; 9069, 6077, 580, 3424, 2992, 7969; 1225, 2137, 7637

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԹՐԳՈՒՀԻՆ ԿԱՄ ԿՐԿԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Տեսարանն է ի Զիւրիք-Սու , ե կարծեմ 1853 ի Ռուսօ-թրքական պատերազմին ժամանակն ենք : Արքի՛ պէյ, որ մարտանաւի մը հրամանատար է՝ Սինօպ պիտի եր-

Թայ պատերազմելու համար թշնամեայ դէմ փղծկելով կը զատուի Տիւրուպայէն՝ իր կինը, զոր մասնաւոր նամակաւ մը կը յանձնարարէ իր հօրը նաւապետ Սիւլէյմանի, որ կը բնակի Պոլիս . նամակը կը յանձնէ իր մտերիմ Շահին պէյին, և կը մեկնի : Նա հազիւ դռնէն դուրս ելած Տիւրուպայ կը յայտնէ ինքզինքը . դն կին մ'է խառնակենցաղ, որ խաբած է Շահին պէյը, որ ունեցած է բազմաթիւ հոմանիներ, և որ հիմա կը խաբէ Ա. քիֆ պէյը : Յետոյ երեան կուգայ էստա պէյ, որ կուզէ ամուսնանալ Տիւրուպային հետ, այրի կարծելով զայն, հաւատք ընծայելով պատմութեան մի քանի սուտ վկաններու, որոնք կաշառուած են Տիւրուպայի կողմէն : Ճշմարտութիւնը սա է որ՝ Ա. քիֆ պէյ, իր նաւը թշնամեային ձեռք չ'յանձնելու համար ռազմավթերին կրակ կուտայ, նաւը կը խրի և ինք ողջ առողջ կ'ազատի : Բայց և այնպէս քանի մը խաբերայներու միջոցաւ իր մահուան լուրը կը տարածուի, և կը հասնի մինչև նաւապետ Սիւլէյմանին ականջը, որ Չիւրիւք-Սու կուգայ իր հօրը իր պաշտպանութեան տակ առնելու համար, հնազանդելով իր որդւոյն վերջին կամքին : Թէև Շահին պէյ կը ջանայ համոզել ծերունի հայրը թէ Տիւրուպայ անարժան է իր պաշտպանութեան, բայց ծերունին կը յամառի մինչև որ Թիւրուպային արձակ համարձակ խօսքերէն չ'սխալի : Էստա պէյի և Տիւրուպայի հարսանեաց պատրաստութիւնքը կը շարունակուին այս վերջնոյն տան մէջ, ուր յանկարծ կը հասնի Ա. քիֆ պէյ, անտեղեակ անցած դացածին, և կարծելով գտնել կին մը սիրող ու հաւատարիմ : Նախ չ'գիտեր ինչ բանի վերաբերել նուագածուններու ներկայութիւնը, յետոյ թէ՛ իր հօր նաւապետ Սիւլէյմանի և թէ՛ իր մտերիմ Շահին պէյի միջոցաւ եղելութիւնը իմանալով ալ ուղիւ բան չը խորհրդ, բայց միայն վրէժխնդրութիւն, զոր կը կատարէ յանձին իրեն յաջորդել ուզող էստա պէյի, որ չ'մեռած կը մեռցնէ զԱ. քիֆ : Տիւրուպայ կը մեռնի նաւապետ Սիւլէյմանի ձեռքով :

Ահա այս է Թիւրուպայի : Դերերը լաւ կատարուեցան թէև ոչ առանց թերութեան : Մի քանին լաւ սորված չ'էին իրենց բաժինը : Պ. Շաւարշ քիչ բան կ'ուզէ կատարել լագործուելու համար : Մերունի Պէնլեան արդէն պայծառ անցեալ մ'ունի : Սմայտ կը խոստանայ, և Տիկին Մարի Պէնլեան՝ հակառակ այն դիւրահասականալի կակիճին՝ որ կը կրծէ իր սիրտը, ծափահարուեցաւ իր Տիւրուպայի դերին մէջ :

Խուռն բազմութիւն մը իր ներկայութեամբ իր համակրութիւնը յայտնեց տառապող հիւանդին, որուն ի նպաստ եղաւ սոյն ներկայացումը, և որուն շուտով ապաքինումը կը մաղթենք :

Խօսք մը ևս : Փափաքելի է որ յարգոյ խումբը լաւագոյն ընտրութիւն մ'ընէր խաղերու մէջ, և ապա ներկայացնէր ասկէ ետքը . վասնզի ինչպէս տեսանք կերակի գիշեր, կան կացութիւններ, կան արտայայտութիւններ, որոնք անախորժ և վիրաւորիչ են հայկական բարքերու և ականջներու :

26 Նոյ . 1900

Տպագրութիւն Ժողովրդային Տպարանի

ԾԱՅԱՆԱԿԵ ՊԵՍ Յ

Անգղիերէն լեզուի ծանօթ ուսուցիչ Կառնիկ Էֆ . Սիրունեան գոհացում տալու համար շատ մը երիտասարդաց փափաքին՝ Էօղպէքիյէ Մօնթէ Բաուօ Պօտէկայի ճիշտ դէմը իւր տան մէջ Անգղիերէն լեզուի դասեր տալ սկսած է :

Նորագոյն մէթոտով կ'ուսուցանէ միմիայն վեճ ԱՄՍՈՒԱՆ կարճ ժամանակամիջոցի մէջ լաւ կարգալ, գրեւ և խօսիլ սոյն ամենակարեւոր լեզուն :

Ամեն օր երեկոյին ժամը 5 Էն վերջը կը գտնուի իր տունը, ուր կրնան դիմել նաև անգղիերէն աղերսագիր ևն . գրեւ տալու պէտք ունեցողները :

Փափաքողաց տուները այցելութեամբ դասախօսելու պատրաստ է :

ԻԳՆԱՏԻՈՍ Կ . ՍՄԱՐԱՅԵԱՆ

Գ Ե Ր Ձ Ա Կ
ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ
Շարա Պապ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներ է Վերահարածանօթ Անգղիացի վաճառական - գերձակ ԺՕՆ ԲՕԼԱԲՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելապէս հմուտ և փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրաին դիմացը, նորաչէն խանութներուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պաս . յաճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձևութեանց զանազանութիւններ գտնելով, և մասնաւոր՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր և ճաշկաւոր գրեթէ անոնք ունենալով :

Ա Ձ Դ

Եգիպտացի ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արևելեան Մամուլ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն ի մասին :

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ փիլակական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով :

Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ դումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յ'Ազգ . վարժարանն ի Տարպէլ-Կիւնէնս :

ՏՃԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍԵԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳՐՈՒԿ 1 ՄԻԼԵԱՐ 43,7 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընտրութեան մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԼԲԸ

Օսկանիյի դեղատանին դիւնացի փողոցին մեջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մ'ջ, մասքուր և ճաշկաւոր պատրաստուելու սօս յմանաւ, կ'ընդունուին .

Այցեխարտեր, Երջարեալականներ, Գիրքեր, Հրատիրագրեր, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վստահականական յանձնարարութիւնն էլ :

Ամենակատարեալ ճշգրտագին թիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ :

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԷԷ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՌՈՅՑԻ

Քանի որ ՍԷՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 'Ղ'Ն ի նիքէլ, կոթէն լարեղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւ տեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 Ղ'Ն է սկսեալ մինչև 2500 Ղ'Ն : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և ոք սիրտէ ժամացոյցներ . պատի և քօնսլի բողմազան Բանտի լներ և ամեն ճաշկալի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամբրիկիտի փօնօկրաքներու :

Ա . ՊԱԼԵԱՆ

Մ Ա Թ Ի Լ Տ

(Իրազեականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՍԱՆԳԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԲԱԳՐԱՏՊԻՆԸ

ՀԱՒԱԲԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԻԱՐԳ .

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն գնել փափաքողներն կամ բաժանորդացուիլ ուղղորդներն, կրնան դիմել՝ Մրչալոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնաւեր - Տեսութիւն :

ՏՃԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍԵԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳՐՈՒԿ 1 ՄԻԼԵԱՐ 43,7 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընտրութեան մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ